

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՆԵԿՏԱՐ ՍԻՍՈՆՅԱՆ

Գուղձն

Հայերեն *գուղձն* բառն ունի «հողի կոշտ, հողի խոշոր կտոր» իմաստը: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում *գուղձն* բառը (բերվում են նաև *գուղձ*, *գուձ* տարբերակները, որոնք հղվում են *գուղձն*-ին) բացատրվում է «զանգուած կամ կոշտ հողոյ. սակաւ մի հող՝ ձեռնաչափ, ոտնաչափ»¹:

Ռ. Ղազարյանի և Յ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում» *գուղձ*, *գուղձն* բառերը բացատրվում են իբրև «բերանի խոռոչում և այտերի վրա առաջացող կոշտ, ուռուցք»²:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» *գուղձն* բառը դնում է չստուգաբանված արմատների շարքում և հիշատակում է, որ Գր. Ղափանցյանը այն կապում է *կորդ* բառի հետ³: Հետաքրքրական է, որ *գուղձն* բառից առաջ նշվող *գուձ* արմատը Հր. Աճառյանը հղում է *կից* արմատին⁴, մինչդեռ ՆՅԲ-ում *գուձ*, *գուղձ*, *գուղձն* բառերը բերվում են իբրև տարբերակներ:

կից բառահոդվածում, խոսելով այդ արմատի նշանակությունների մասին, Հր. Աճառյանը նշում է, որ «Առձեռն բառարանում» գրված է *գուձ* կամ *գուձն* և բերում օրինակներ, որոնցում *կից*-ը գործածվում է *հող* բառի հետ (... այնչափ միւթ կայ ի մին կից հողն...)⁵: Այս օրինակը ցույց է տալիս, որ *կից*-ն այստեղ գործածված է ոչ թե «իրար կպած, իրար կից իմաստով», այլ նշանակում է «մի ավազափ, մի ձեռնաչափ հող» և չի կապվում *կից* «մոտ, կցված» բառի հետ:

Գր. Ղափանցյանը «Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում» հոդվածում, խոսելով *r/y* և *r/n* հերթագայության մասին, անդրադառնում է *կորդ* «չբանեցուած, վարուցան չեղած, կոշտ, չոր, պինդ» բառին և համեմատում դրանք *կունձն* կամ *կունծն*..., *գուղձ(ն)* «հողի կոշտ, մեկ բուռ հող» բառերի հետ⁶:

Գր. Ղափանցյանը չի անդրադառնում այդ բառերի ստուգաբանությանը: Նա *r/n/լ* հերթագայության օրինակներ որոնելիս զուգադրում է *կորդ*, *կունծն*, *գուղձ-ն* ձևերը, բայց ուշադրության չի առնում նախ *կորդ* և *գուղձ* բառերի իմաստային կողմը (*կորդ* «չվարած, աննշակ հող», *գուղձ*՝ «հողակոշտ») և ապա՝ բառասկզբի *կ* և *գ* հնչյունները: Իհարկե, *ր/ղ*, *ղ/ծ* անցումները հատուկ են հայերենին, բայց *կ/գ* անցումը հայերե-

¹ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Եր., 1979, հ. I, էջ 579:

² Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 1987, հ. I, էջ 156:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971, հ. I, էջ 583 (այսուհետև՝ ՅԱԲ):

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ ՅԱԲ, Եր., 1973, հ. II, էջ 595-596:

⁶ Տե՛ս Գր. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում, Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1927, № 2, էջ 97:

նին հատուկ չէ, և թերևս այնքան էլ հավանական չէ մեկ բառի մեջ միանգամից երեք՝ *կ/զ, ղ/ղ, դ/ծ* հնչյունական անցում: *Գուղծն* ձևը, ինչպես նշում է Յր. Աճառյանը, հանդիպում է նաև *կուղծն, կուղծն*, իսկ բարբառներում նաև *զ՞ուղցխ, կուղծղ, կուղծ՛*:

Կորդ բառի ստուգաբանությանն է անդրադարձել Գ. Զահուկյանը՝ այն համեմատելով ուրարտ. *quidi/e(ni)* «կորդ, խոպան, անմշակ, ամայի» բառի հետ⁸:

Գ. Զահուկյանը *գուղծն* բառի ստուգաբանությանը չի անդրադարձել: Իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատության մեջ *գուղծն* բառը հիշատակում է մեկ բաղաձայնական *-ն*-ով հիմք ունեցող ոչ հնդեվրոպական բառերի շարքում՝ ենթադրելով, որ դրանք «... գոնե մասամբ պետք է ունենան ուրարտական ծագում կամ հայերենին անցած լինեն ուրարտերենի միջոցով»⁹, մեկ էլ հայերենի հնագույն շրջանի բառապաշարի բարբառային տարբերակներին նվիրված բաժնում, որտեղ բերում է *կոշտ - գուղծն* հոմանիշները՝ վերջինս «ուշ» նշումով, այսինքն համարելով *V* դարի առաջին կեսի երկերում չհանդիպող բառ¹⁰:

Կարծում ենք, որ *գուղծն* բառը կարելի է կապել *գեղծ* «մարմնի մեջ խուլլ, ուռուցք» արմատի հետ:

Գեղծ բառի հնդեվրոպական ծագումը կասկած չի հարուցում¹¹: Այն հանգում է *h.-ե. *ghelǵha* նախաձևին: Այս արմատից առաջացած բառեր են առկա սլավոնական լեզուներում՝ հսլ. *žlěza*, եկսլավ. *жльза*, բուլղ. *жлеза*, սլովեն. *žlěza*, հին չեխ. *žlěza*, լեհ. *zołza*, լուժիերեն *žalza*, լիտվ. *gėležuones*, *gėležūnes*, *geležūnes*՝ բոլորն էլ *գեղծ* նշանակությամբ¹²: Հետաքրքիր է, որ *գեղծ* արմատի հետ են կապվում նաև այնպիսի բառեր, որոնք ունեն ընդհանրապես ուռուցք, կոշտություն, մարմնի վրա առաջացած կոշտ իմաստները: Մ. Ֆասմերը նշում է, որ Պերսոնը *գեղծ* արմատի հետ է կապում նաև հուն. *γέλφισ* «սխտորի գլուխ կամ պճեղ» բառը¹³: Ինքը՝ Ֆասմերը, *գեղծ* բառի հետ է համեմատում նաև ռուս., ուկր. *желвѣк*, չեխ. *žluna* "золотуха" (մաշկային հիվանդություն, որի ժամանակ մաշկի վրա առաջանում են կոշտություններ, ուռուցքներ), սլովեն. *želva* «գեղծ», լատիշ. *dzelva* «այտուց մաշկի վրա» բառերը¹⁴:

Եթե *h.-ե. *ghelǵha* նախաձևից կարող են ծագած լինել ոչ միայն «մարմնի մեջ խուլլ, ուռուցք», այլև ընդհանրապես «կոշտություն, կոշտ, կլոր իր» նշանակությամբ բառեր, ապա հայերենի համար հավանական կարելի է համարել նաև *գեղծ-գուղծ(ն)* «հողակոշտ» իմաստային անցումը, եթե նկատի ունենանք մանավանդ նաև միջին հայերենի՝ վերը նշված «բերանի խոռոչում և այտերի վրա առաջացող կոշտ, ուռուցք» նշանակությունները (տե՛ս հղում 2):

⁷ Տե՛ս Յր. Աճառյան, ՅԱԲ, հ. I, էջ 432:

⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987, էջ 432:

⁹ Նույն տեղում, էջ 440:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 401:

¹¹ Տե՛ս Յր. Աճառյան, ՅԱԲ, հ. I, էջ 534-535, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 127:

¹² Տե՛ս Փасмер М. Этимологический словарь русского языка. Т. I, М., 1986, էջ 42:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 41:

Տիլա/տիլօ

Լոռու բարբառում գործածական է *տիլօ* բառը՝ «սրբիչ՝ ամանները սրբելու, ջուրը չորացնելու համար» իմաստով:

Տիլօ բառը վկայված չէ Հր. Աճառյանի «Գավառական բառարանում», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում, գավառական այլ բառարաններում, բացառությամբ Ս. Գաբամաճյանի «Նոր բառագիրք հայերեն լեզուի» [Կ. Պոլիս, 1910 թ., էջ 1294] բառարանի, որտեղ առկա է նաև *տիլա* բառը՝ «կտոր» իմաստով: *Տիլօ* բառը չի հանդիպում նաև Լոռու բարբառին նվիրված ուսումնասիրություններում¹⁵:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» բերում է *տիլա* արմատը *կտալ* իմաստով, և նշում է, որ «ունի միայն Քաջունի»¹⁶, չնայած «Արմատական» բառարանի համար նյութեր քաղելիս Հր. Աճառյանը օգտվել է նաև Ս. Գաբամաճյանի բառարանից:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» բերվում են *տիլալ* (հազվադեպ բառ նշումով) և *տիլօ* (գավառական բառ նշումով) բառերը իբրև մեկ զլխաբառ, մեկ բառահոդվածով, և տրվում են երկու իմաստներ. 1) Քաթանի կամ կանեփի հաստ կտոր, 2) Ընդհանրապես կտոր, որով ամաններ են լվանում կամ սրբում: «Չայի տիլօ»¹⁷: Ստ. Մալխասյանցը *տիլալ* և *տիլօ* բառերի կողքին նշում է վրաց. *tilo*-ն և բերում է Դ. Չուբինովի կարծիքը, որ վրացերեն *tilo*-ն փոխառություն է լատիներենից, և ավելացնում է, որ «սակայն լատ. կայ *tilia*, որ ծառ է»¹⁸:

Պետք է նշել սակայն, որ Դ. Չուբինովը վրացերեն-ռուսերեն-ֆրանսերեն բառարանում վրաց. *tilo* բառի բացատրության ժամանակ նշում է լատ. *tēla* (ոչ թե *tilia*, ինչպես գրում է Մալխասյանցը), որ նշանակում է կտոր (ТКАНЬ), այնուհետև բերում է ռուս. ХОЛСТЪ և ֆր. *toile* ձևերը, որոնք նույնպես ունեն «կտոր, կտալ» իմաստները¹⁹:

Ս. Քաջունին «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» բառարանի III հատորում բերում է *տիլալ* բառը՝ կտալ իմաստով²⁰, իսկ II հատորում ֆր. *toile*, իտալ., լատ. *tela* «կտալ» բառերի բացատրության ժամանակ գրում է. «Ասի առհասարակ զամենայն ազգ անկուածոյ ի կտաւոյ, ի բամբակէ..., բայց առանձինն կոչին այն գործուածք, որ են ի կտաւոյ և ի կանափէ...»²¹:

Հ.-ե. լեզուներում «սրբիչ, թաշկինակ, անձեռոցիկ» նշանակությամբ բառերը ծագում են տարբեր արմատներից: Կ. Բաքի հ.-ե. լեզուների հոմանիշների բառարանում բերվում են այդ բառերի հոմանիշները տարբեր լեզուներում. «թաշկինակ» (*Handkerchief*) բառահոդվածում բերվում են լատ. *mantēle* (*man*(*manus*)-ձեռք և *tēla*-կտոր), հուն. *χειρόμακτρον* (*χειρο*-ձեռք և *μακτρον*-լաթ, կտոր) բառերը, և նշվում է, որ դրանք նշանա-

¹⁵ «Հայոց լեզվի բարբառային բառերի բառարանի» «Տ» տառն ընդգրկող հատորը դեռևս հրատարակված չէ, և հնարավոր չեղավ պարզել՝ այդ բառն այնտեղ կա, թե ոչ:

¹⁶ Հր. Աճառյան, ՀԱԲ, Եր., 1979, հ. IV, էջ 405:

¹⁷ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1945, հ. IV, էջ 412:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Чубинов Д. Грузинско-русско-французский словарь. С.-Петербург, 1840, էջ 478:

²⁰ Տե՛ս Ս. Քաջունի, Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1892, հ. II, էջ 236:

²¹ Նույն տեղում, հ. III, էջ 742:

կել են *սրբիչ*, բայց հետագայում գործածվել են նաև *թաշկինակ* նշանակությամբ: Իտալերենում կա *pezzuola* «թաշկինակ» բառը՝ *pèzza* «գործվածքի կտոր, կաժ» բառից, իսպաներենում՝ *pañuelo*՝ *pañó* «կտավ» բառից, ուելսերենում՝ *cadach*, որ նշանակում է «գրպանի շոր, կտոր», դանիերենում՝ *lomme-tørklæde* «թաշկինակ» (*lomme*-գրպան, *tør*-չոր և *klæde*-կտոր, գործվածք բառերից), նաև ռուս. платок, полотенце, полотно, ռում. *batistă* «թաշկինակ»՝ *բատիստ* բառից²²:

Լատիներենում կան նաև *sūdārium* «թաշկինակ» (հ.-ե. **sudor*-«քրտինք» արմատից) և *ōrārium*՝ «թաշկինակի տեսակ դեմքը կամ բերանը սրբելու համար, անձեռոցիկ» (*ōs*, *ōris* բառից):

Սրբիչ նշանակությամբ բառեր կան իսպաներենում՝ *toalla*, նոր իռլ. *tuáille*, ուելս. *tywel*, միջին անգլ. *towaille*, նոր անգլ. *towel*, հին վերին գերմ. *dwahilla*, միջին վերին գերմ. *dwehel*, շվեդ. *nusduk* (*nus* «քիթ», *duk* «կտավ, կտոր»)՝²³ և այլն:

Յ.-ե. լեզուների այս բառերի քննությունը ցույց է տալիս, որ «թաշկինակ, սրբիչ» նշանակությամբ բառերի իմաստային բաղադրիչների մեջ առկա են «կտավ, գործվածք» իմաստով արմատներ: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ հայերեն *տիլալ* «կտավ» իմաստով բառը ևս կարող էր գործածվել *սրբիչ* նշանակությամբ:

Կարծում ենք, որ հայերեն *տիլալ* բառին ևս կարելի է վերագրել հ.-ե. ծագում և կազմված համարել հայ. *տիլ* (*տիղմ*) արմատից:

Տիլ, *տիղմ* բառերի ստուգաբանությանն անդրադարձել է Յր. Աճառյանը, որն այն կապում է հ.-ե. **stēl*- «կաթել, կաթկթել» նախածնին. հունարենում կան *σταλάω* «կաթիլ-կաթիլ ծորել», *τέλμα* «ճահիճ, ցեխ» բառերը²⁴:

Գ. Ջահուկյանը կասկածելի է համարում այդ ստուգաբանությունը և *տիլ*, *տիղմ* բառերի համար ավելի հավանական է համարում հ.-ե. **dēl*-արմատից ծագած լինելը²⁵:

Ստուգաբանության որ տարբերակին էլ որ նախապատվություն տանք, մի բան պարզ է, որ հայ. *տիլ*, *տիղմ* բառերը ունեն հ.-ե. ծագում:

Հայերեն *տիլ* բառը նշանակել է «ջրալի ցեխ, թաց տիղմ»²⁶: *Տիլալ* «կտավ» բառը կարող էր ունենալ ջուրը ցամաքեցնելու համար կտոր, սրբիչ իմաստային զարգացումը (հմնտ. վերը բերված *sūdārium*, հուն. *σοῦδάριον* «թաշկինակ» բառերը, որոնք կազմված են հ.-ե. **sudor* «քրտինք» արմատից, ինչպես նաև ռումիներեն *batista* «թաշկինակ» բառը՝ *բատիստ* (կտորի տեսակ) բառից):

Հայերենի *տիլալ* «կտավ, սրբիչ» բառն էլ կարող էր կազմվել *տիլ* բառից՝ -ալ մասնիկով:

Տիլալ բառի -ալ մասնիկի համար կարելի է բերել զուգահեռներ ինչպես հայ. բնիկ (*կուտ-կտալ*²⁷, *հարալ*²⁸) բառերից, բնածայնություններից

²² Տե՛ս Buck C. D. A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages, Chicago, 1949, էջ 446-447:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Յր. Աճառյան, ՅԱԲ, հ. IV, էջ 406-407:

²⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 118:

²⁶ Տե՛ս Յր. Աճառյան, ՅԱԲ, հ. IV, էջ 407)

²⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1965, հ. I, էջ 257:

²⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ստուգաբանություններ, «Լրաբեր», 1973, հ. VI, էջ 20:

(*ազր-աւ, կար-աւ*), այնպես էլ հ.-ե. այլ լեզուներից (հմմտ. պրսկ. *pārāv – պիլ. pēr- «ծեր» արմատից, *պարս-աւ-ել՝ պարս* – «քար» արմատից ևն):

Ինչ վերաբերում է վրացերենի *տիլօ* ձևին, կարծում ենք, որ այն հայերենից (ոչ լատիներենից) կատարված փոխառություն է:

Մեր այս ենթադրության համար հիմք են ծառայել Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ բերված հայ. *խաւ* և *զրաւ* բառերի վրացերեն *խաօ* և *զիրաօ* գուգահեռները: Հր. Աճառյանը, խոսելով հայ. *աւ* երկբարբառի մասին, գրում է, որ այն վրացերենում արտացոլվել է իբրև *աօ*²⁹:

Մենք կարծում ենք, որ *աւ*-ը վրացերենում կարող էր արտացոլվել և՛ իբրև *աօ*, և՛ իբրև *օ*. մեկ ձայնավոր ունեցող բառերում առկա է *աւ-աօ* համապատասխանությունը:

խաւ-ը *խօ* չէր կարող հնչվել, քանի որ հակառակ դեպքում այն կհանրկնկներ վրացերեն *խօ* «հա, այո» բառի հետ³⁰: Իսկ ահա երկու ձայնավոր ունեցող բառերում, ինչպես *տիլաւ*-ն է, առկա է *աւ-օ* համապատասխանությունը: Վրացերենում *տիլօ* բառն ունի. «1) կտավ, քաթան, 2) քուրջ, լաթ, փոշելաթ, նաև սեղանի ջնջոց» իմաստները³¹:

Հետագայում վրացերենի *տիլօ* բառը փոխառվել է Լոռու բարբառում՝ հասկանալի պատճառներով, և գործածվել «ամանների սրբիչ» (Մալխասյանցի բառերով՝ «չայի տիլօ») նշանակությամբ:

НЕКТАР СИМОНЯН – Этимологические наблюдения. – Слово *ցւլջն* "комочек, ком земли" считалось либо словом с неясной этимологией (Р. Ачарян), либо урартского происхождения, либо проникшим в армянский язык через урартский (Г. Джаукян).

Автор статьи считает, что это слово как семантически, так и фонетически можно связать с армянским корнем *ցելջ* "опухоль в теле", восходящим к индоевропейской праформе **ghelīha-*.

Аналогичное семантическое развитие наблюдается также в других индоевропейских языках (ср.: гр. γέλιφις "головка или долька чеснока", рус. желвак, золотуха "болезнь, при которой появляется сыпь на теле").

Tilaw/tilo. В лорийском диалекте армянского языка употребляется слово *tilo* "полотенце для посуды", которое связывается со словом *tilaw* "полотно, ткань". Слово *tilaw* Р. Ачарян относит к неэтимологизированным корням.

По мнению автора, *tilaw* можно связать с армянским корнем *til* "жидкая грязь, ил", индоевропейское происхождение которого не вызывает сомнения. Он восходит к индоевропейской праформе **dēl-*. От корня *til* с помощью суффикса *-aw* образовалось слово со значением "полотно, ткань", позднее также "полотенце". В других индоевропейских языках также наблюдаются сходные семантические развития (ср.: лат. *sūdarium*, гр. σουδάριον "платок" – из индоевропейского корня **sudor* "пот, испарина").

Армянское слово *tilaw* было заимствовано из грузинского языка в форме *tilo* в силу определённых условий (смежные территории обитания, различные контакты).

²⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 588:

³⁰ Տե՛ս Ռ. Գորգաձե, Վրացերեն-հայերեն բառարան, Եր., 2005, էջ 531:

³¹ Առկն տեղում, էջ 531:

NEKTAR SIMONIAN – *Etymological observations.*- The word *guljn* which means "hard piece of soil" has either been considered of an unknown origin (Hr. Acharyan) or Urartian. G. Jahukian believed the word to have penetrated into Armenian from Urartian. The present paper assumes that the word *guljn* both by meaning and sound could relate to Armenian root *gelj* meaning "gland, tumour in the body", which goes to Indo-European *ghelīha.

Similar developments of the meaning are also observed in other I.-E. languages (compare Greek γέλις "garlic head", Russian желвак "tumour, scirrhus", золотуха "scrofula, king's evil").

Tilaw/tilo.- Lori dialect uses the word *tilo* in the meaning of "towel", which is linked to the word *tilaw* meaning "tissue, cloth". Hr. Acharyan places the word *tilaw* among unknown roots. In this paper, *tilaw* is connected with the Armenian root *til* meaning "watery mud, slime", which is undoubtedly of Indo-European origin. It originates from the I.-E. prototype *dēl-. The word *tilaw* "cloth, tissue" thus was formed from the root *til* and particle *-av*, and later was used in the meaning of "towel".

Similar developments of the meaning exist in other I.-E. languages (compare Latin sūdārium, with Greek σουδάριον both meaning "handkerchief, from I.-E. root *sudor "sweat").

Armenian *tilaw* was transformed to *tilo* in Georgian. Later, the Georgian *tilo* was adopted by Lori dialect due to geographical proximity, close communication, etc.